



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր  
խրավասության քրեական դատարան,  
նախագահող դատավոր՝ Վ.Մելիքյան

ՀՀ վերաքննիչ քրեական դատարան,  
նախագահող դատավոր՝ Մ.Պապոյան  
դատավորներ՝ Ռ.Պապոյան  
Գ.Ստեփանյան

5 մայիսի 2026 թվական

ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ  
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով [REDACTED]  
վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 10-ի  
որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի և մեղադրյալ  
[REDACTED] պաշտպան Հ.Գալստյանի վճռաբեկ բողոքները,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հունիսի 6-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ [REDACTED] քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունիսի 11-ի որոշմամբ [REDACTED] [REDACTED] ճանաչվել է տուժող, իսկ 2018 թվականի հունիսի 15-ի որոշմամբ՝ [REDACTED] ճանաչվել է անչափահաս տուժող [REDACTED] [REDACTED] օրինական ներկայացուցիչ:

2. 2018 թվականի հուլիսի 18-ին [REDACTED] ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ [REDACTED] [REDACTED] մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ մեղադրյալ [REDACTED] նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով՝ կալանքի սկիզբը հաշվելով 2018 թվականի հուլիսի 18-ից:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ [REDACTED] կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամսով՝ մինչև 2018 թվականի նոյեմբերի 18-ը:

4. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ՝ թիվ [REDACTED] քրեական գործով, դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ է հարուցվել:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 10-ի [REDACTED] [REDACTED] ճանաչվել է մեղադրյալ [REDACTED] [REDACTED] օրինական ներկայացուցիչ:

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Հ.Հարությունյանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ [REDACTED] նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացվել է:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է՝ թույլատրվել է [REDACTED] տեղավորել հոգեբուժական հաստատությունում՝ հաստատելով քրեական օրենքով չթույլատրված արարք ենթադրաբար կատարած [REDACTED] նկատմամբ որպես անվտանգության միջոց հոգեբուժական հաստատությունում տեղավորելու վերաբերյալ քննիչի որոշումը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ թիվ [REDACTED] քրեական գործով վարույթը կասեցվել է՝ մեղադրյալ [REDACTED] ծանր հիվանդ լինելու հիմքով՝ մինչև հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարված վիճակից դուրս գալը:

4.1. 2018 թվականի հոկտեմբերի 29-ին [REDACTED] նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու վերաբերյալ գործն ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ՝ քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած և դեպքից հետո հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում ստացած [REDACTED] նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ նրա նկատմամբ նշանակվել է հարկադիր բուժում հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում: [REDACTED] նկատմամբ ընտրված անվտանգության միջոցը՝ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը, թողնվել է անփոփոխ՝ մինչև որոշման օրինական ուժի մեջ մտնելը:

4.2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ [REDACTED] նկատմամբ հարկադիր բուժումը հատուկ հոգեբուժական բաժանմունքում վերացվել է:

4.3. Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ թիվ [REDACTED] քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է, իսկ 2020 թվականի

փետրվարի 8-ի որոշմամբ՝ [REDACTED] նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

5. 2020 թվականի մարտի 3-ին [REDACTED] վերաբերյալ թիվ [REDACTED] քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռով [REDACTED] մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով: Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու 2 (երկու) ամիս 22 (քսաներկու) օրն ու հոգեբուժական հիվանդանոցում գտնվելու 1 (մեկ) տարի 3 (երեք) ամիս 25 (քսանհինգ) օրը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 5 (հինգ) ամիս 13 (տասներեք) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճռվել է նաև ամբաստանյալ [REDACTED] հոգուտ ՀՀ պետրյուջե բռնագանձել 185.870 ՀՀ դրամ՝ որպես դատական ծախսերի գումար, իսկ իրեղեն ապացույց ճանաչված սև-մոխրագույն երկարաթև սլիտերը դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վերադարձնել ամբաստանյալ [REDACTED]:

7. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2024 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ դատախազի բողոքը մերժվել է, իսկ պաշտպանի բողոքը բավարարվել մասնակի՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի դատավճիռը բեկանվել և փոփոխվել է, [REDACTED] [REDACTED] մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու 2 (երկու) ամիս 22 (քսաներկու) օրն

ու հոգեբուժական հիվանդանոցում գտնվելու 1 (մեկ) տարի 3 (երեք) ամիս 25 (քսանհինգ) օրը և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 5 (հինգ) ամիս 13 (տասներեք) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 10-ի որոշման դեմ մեղադրյալ [REDACTED] պաշտպան Հ.Գալստյանը և ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանը ներկայացրել են վճարել բողոքներ, որոնք Վճարել դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ ընդունվել են վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

### **Վճարել բողոքների հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Վճարել բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

*1. Մեղադրյալ [REDACTED] պաշտպան Հ. Գալստյանի բողոքի փաստարկները և պահանջը.*

9. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեական և քրեադատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են վարույթի ելքի վրա:

9.1. Ըստ բողոքաբերի՝ [REDACTED] մեղավորությունը հիմնավորող բավարար ապացույցների բացակայության պայմաններում կայացվել է մեղադրական դատական ակտ:

Բողոքաբերի պնդմամբ՝ իր պաշտպանյալին առաջադրված մեղադրանքի ձևակերպումները պարզ չեն, դրանք չեն բխում քրեական գործի տվյալներից, առաջադրված մեղադրանքի բովանդակությունից ակնհայտ չէ բռնության եղանակը: Մեղադրանքի բովանդակությունից հետևում է, որ նախաքննական մարմինը [REDACTED] վերագրել է բռնություն գործադրելու եղանակով ենթադրյալ հանցանքի կատարում՝ վկայակոչելով այն, որ նա բռնություն գործադրելով փորձել է թույլ չտալ, որ [REDACTED] հեռանա շքանուտքից: Մինչդեռ [REDACTED] կողմից տուժողի նկատմամբ որևէ բռնություն չի գործադրվել: Այն բոլոր

գործողությունները, որոնք նկարագրված են մեղադրանքում՝ որևէ առնչություն չունեն բռնության հետ, ավելին՝ տուժող ճանաչված անձի նկատմամբ որևէ ֆիզիկական ներգործություն չի եղել: Այնինչ, Վերաքննիչ դատարանն անհիմն եզրահանգման է եկել [REDACTED] վերագրվող ենթադրյալ արարքի քրեաիրավական գնահատականի հարցում՝ արդյունքում հաստատելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված ենթադրյալ արարքի առկայությունը և ենթադրյալ արարքը [REDACTED] կողմից կատարելու փաստը:

Բողոքաբերի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանը հանգել է գործի նյութերից չբխող և գործի նյութերով չհաստատվող հետևությունների, առանց բավարար ապացույցների հաստատված է համարել գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող այնպիսի փաստեր, որոնք վճռորոշ են եղել [REDACTED] վերաբերյալ մեղադրական դատական ակտ կայացնելու համար:

9.2. Ըստ բողոքաբերի՝ առկա է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու մեկ այլ հիմք ևս, որն առնչվում է համաներման ակտը չկիրառելուն:

Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը [REDACTED] մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել 4 տարի ժամկետով ազատազրկում, որը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Բողոքի հեղինակի համոզմամբ՝ տվյալ իրավիճակում Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը և չի կիրառել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: Մինչդեռ, այն պետք է կիրառվեր՝ նկատի ունենալով, որ [REDACTED] նկատմամբ նշանակված պատիժը չի գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև քրեական գործի նյութերում բացակայում է համաներման մասին օրենքի կիրառմանը խոչընդոտող որևէ հանգամանք: Ուստի նա պետք է ազատվեր նշանակված պատիժը կրելուց:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել և [REDACTED] առաջադրված

մեղադրանքում արդարացնել, կամ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով [REDACTED] ազատել Վերաքննիչ դատարանի կողմից նշանակված պատժից:

*II. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի բողոքի փաստարկները և պահանջը.*

11. Բողոքարեբը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական օրենքի էական խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

11.1. Ըստ բողոքարեբի՝ [REDACTED] ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքը նույն օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով վերաորակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևություններն իրավաչափ չեն:

Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը [REDACTED] մեղսագրված արարքը վերաորակելը պատճառաբանել է նրանով, որ արարքը տվյալ ծանրացնող հանգամանքով որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի հանցավորը հստակ գիտակցի տուժողի մանկահասակության՝ տասնչորս տարին լրացած չլինելու հանգամանքը, մինչդեռ սույն գործով ամբաստանյալը չի գիտակցել և ողջամտորեն չէր կարող գիտակցել այն հանգամանքը, որ դեպքի պահին տուժողի տասնչորս տարին լրացած չի եղել: Բողոքի հեղինակն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանի նման հետևությունը պայմանավորված է բացառապես այն հանգամանքով, որ [REDACTED], պատասխանելով դատավարության մասնակիցների հարցերին, հայտնել է, որ «(...) այդ երեխաները կլինեին մոտավորապես 15-16 տարեկան, իսկ այդ աղջիկը եղել է ամենաբարձրահասակը», իսկ նախաքննության ժամանակ [REDACTED] ցուցմունք է տվել, որ «չի իմացել, որ [REDACTED] եղել է 14 տարեկանից ցածր, քանի որ եղել է բարձրահասակ»:

Այս առնչությամբ բողոքի հեղինակը փաստարկել է, որ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունը ճիշտ որակելու առումով,

տուժողի տարիքի վերաբերյալ բացառապես հանցավորի հայտնածը հինք ընդունելն իրավաչափ չէ, քանի որ հանցանք կատարած անձը կարող է նպատակ հետապնդել՝ քրեական պատասխանատվության ենթարկվել նվազ ծանրության հանցանքի կատարման համար:

Բողոք բերած անձն ընդգծել է, որ անհրաժեշտ է ենթադրյալ հանցանք կատարած անձի հայտնածը համադրել գործով ձեռք բերված այլ փաստական տվյալների հետ: Մասնավորապես, ինչպես երևում է քրեական գործի նյութերից, [REDACTED] ստացել է բարձրագույն կրթություն, աշխատել է [REDACTED] [REDACTED] այսինքն՝ նա, մինչև դեպքը շփվելով մանկահասակ երեխաների հետ, առնվազն պետք է գիտակցեր տարբեր երեխաների հասունացման առանձնահատկությունները:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով դեպքի տեսագրությունը, արձանագրել է, որ հնարավոր չէ միանշանակ պնդել, որ ակնհայտ է տուժողի 14 տարին լրացած չլինելը, մինչդեռ, ըստ բողոքարեղի՝ հիշյալ տեսագրության մանրակրկիտ ուսումնասիրությամբ տեսանելի է, որ տուժողն ընդամենը բարձրահասակ է, իսկ նրա դիմագծերը և աղջկա հասունացմանը բնորոշ արտաքին տվյալները վկայում են վերջինիս՝ 14 տարին լրացած չլինելու մասին:

Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, [REDACTED] մեղսագրվող արարքը վերաորակելով, թույլ է տվել դատական սխալ՝ նյութական օրենքի խախտում, մասնավորապես՝ սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածը, ինչի արդյունքում հանցանք կատարած անձը մեղավոր է ճանաչվել նվազ ծանրության հանցանքի կատարման համար:

11.2. Բացի այդ, ըստ բողոքարեղի՝ [REDACTED] նկատմամբ նշանակված պատիժն անհիմն կերպով պայմանականորեն չի կիրառվել:

Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանները սույն գործով ճիշտ չեն գնահատել [REDACTED] կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, սխալ են կիրառել պատժի նշանակմանը վերաբերող իրավադրույթները, անտեսել են պաշտպանվող հասարակական հարաբերությունների սոցիալական նշանակությունը, ինչն էլ հանգեցրել է [REDACTED] նկատմամբ նշանակված պատիժն անհիմն կերպով պայմանականորեն չկիրառելուն:

Բողոքները նշել է, որ ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, հանցանքի շարժառիթը, արարքի կատարման եղանակը, հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, ինչպես նաև հանցագործության կատարման հանգամանքները:

12. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը, [REDACTED] մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և նրա նկատմամբ նշանակել ազատազրկման ձևով պատիժ՝ առանց նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական և իրավական հանգամանքները.**

13. Նախաքննության մարմնի որոշմամբ [REDACTED] մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ այն բանի համար, որ *«նա, փասնչորս փարին չլրացած անձի կամքին հակասակ* [REDACTED]

[REDACTED]

[Redacted text]

14. [Redacted] շնորհ տեսախցիկի տեսագրության գնության արձանագրության համաձայն՝ «(...) [Redacted]

[Redacted text]

...)»<sup>2</sup>:

15. Համալիր ստացիոնար դատահոգեբուժական և սեքսոպաթոլոգիական փորձաքննության թիվ 57 եզրակացության համաձայն՝ « [Redacted] սեքսոլոգիական հետազոտման արդյունքում ի հայտ է եկել հոգեւետական զարգացման հասպաղում: Մարմնաստեղծական զարգացման արտահայտված շեղումներ հետազոտման պահին չեն նկատվում: Ըստ անամնեստիկ տվյալների՝ [Redacted] կողմից նշվում է հաճախակի սեքսուալ ֆանտազիաներ և հակումներ անչափահաս աղջիկների նկատմամբ: Սեռական վարքի նման դրսևորումները [Redacted] մոտ հնարավոր է պայմանավորված լինեն նրա հոգեւետական զարգացման հասպաղմամբ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 90-92:  
<sup>2</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 62-63:  
<sup>3</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 224-229:

16. Լրացուցիչ ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության թիվ 74 եզրակացության համաձայն՝ «[redacted] նախկինում և արարքը կատարելու պահին որևէ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ չի տառապել և նա կարող էր գիտակցել իր գործողությունների վրանգավորությունը և ղեկավարել դրանք:

Ինչպես երևում է քրեական գործում առկա փյուջաներից՝ [redacted] [redacted] մինչ դեպքը վարել է քաղաքացիական՝ բնականոն ապրելակերպ, ինչի մասին վկայում են. արացած բարձրագույն կրթությունը, մասնագիտությամբ աշխատելը, բազմիցս պատվոգրերով պարգևատրվելը, որևէ հոգեբուժական բուժ. հաստատություն չդիմելը և բուժում չարանալը: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ աշխատելով [redacted] փորձաքննվողը շփվելով պատանիների հետ սոցիալ և անբարո վարքի կապակցությամբ, բողոքներ չեն եղել, ոստիկանության բաժին բերումներ չի ունեցել:

Ուարի իրեն մեղաագրվող արարքների նկարմամբ [redacted] [redacted] հարկ է ճանաչել՝ ՄԵՂՍՈՒՆԱԿ»<sup>4</sup>:

17. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն. «(...) Ամբաստանյալ [redacted] դատաքննության ընթացքում ցուցմունք է փվել այն մասին, որ 2-3 տարի աշխատել է [redacted] հետ: Հետո աշխատանք չի ունեցել և երկաթ, պղինձ և այլումին է հավաքել: Հոսանքի հաշվիչների վրա նույնպես լինում են պղնձի լարեր, որոնք թողնում են էլեկտրիկները և ինքը դրանք հավաքել ու հանձնել է: [redacted]

[redacted]  
[redacted]  
[redacted]  
[redacted]  
[redacted]  
[redacted]

Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ [redacted] կողմից հայրնած փետեկությունները չեն համապատասխանում իրականությանը, նման

<sup>4</sup> Տե՛ս քրեական գործ, հատորի 2-րդ, թերթեր 110-118:

տեղեկություններ հայրնելը նպարակ է հերասանում ազարվել քրեական պարասիանարվությունից և պարծից:

■ հայրնած տեղեկությունները հերքվել են դարարնության հերագորված ներքոգրյալ ապացույցներով (...):

[Ա]մրասարանյալ ■ վերջին խոսքի իրավունքից օգրվելիս ամրողջությամբ իրեն մեղավոր է ճանաչել, զղջացել կարարածի համար և ներողություն խնդրել: (...)

Դարարանը հանգում է հերևության, որ ■ մեղավորությանը կարարել է իրեն՝ 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենագրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կերով մեղասգրվող արարքը, դա կարարելու համար ենթակա է քրեական պարասիանարվության և պարծի:

Ամրասարանյալ ■ նկարմամբ պարիծ նշանակելիս դարարանը հաշվի է առնում ինչպես կարարած հանցագործության բնույթն ու հասարակական վրանգավորության սարիճանը, այնպես էլ նրա անձը:

Դարարանն ամրասարանյալ ■ պարասիանարվությունն ու պարիծը մեղմացնող և անձը բնութագրող հանգամանք է արձանագրում առաջադրված մեղարանքն ընդունելը, զղջալը, նախկինում դարասարված և որևէ կերպ արարավորված չիներ, վերջինիս ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան խնդիրներ ունենալը և դրական բնութագրվելը:

Դարարանն ամրասարանյալ ■ պարասիանարվությունն ու պարիծը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում:

(...) [Ե]կարի ունենալով, որ ՀՀ քրեական օրենագրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կերով պարիծ է նախարեակված բացառապես ազարագրկման ձևով, դարարանը գրնում է, որ ամրասարանյալի նկարմամբ պերք է պարիծ նշանակել ազարագրկման ձևով, որը տվյալ դեպքում համաչափ է կարարված կոնկրետ հանցագործության բնույթին, վրանգավորության սարիճանին, այն կարարելու հանգամանքներին, հանցավորի անձին և բավարար է պարծի նպարակների նվաճման տեսանկյունից:

(...) [Ա]նդրադասակարգում սույն գործով ամբաստանյալի նկատմամբ նշանակվելիք ազատագրվման ձևով պարիժը պայմանականորեն չկիրառելու հարցին և հաշվի առնելով վերը նշված ամբաստանյալի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը, նրա անձը, վերջինիս առողջական խնդիրներ ունենալու հանգամանքը, մեղքն ընդունելու և անկեղծորեն զղջալու, պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պարասիսանարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ուստի նրա նկատմամբ նշանակվող պարիժը պետք է պայմանականորեն չկիրառել:

Դատարանը նման դիրքորոշման գալիս ելակերային է համարում նաև ամբաստանյալ [REDACTED] կողմից արարքի կատարումից հետո դրսևորած վարքագիծը: Մասնավորապես՝ [REDACTED] իրեն մեղազրվող արարքի կատարումից հետո դրսևորել է բացառապես պարզաձև վարքագիծ, վերջինիս վարքագծի վերաբերյալ նշված ժամանակահատվածում որևէ հակաօրինական կամ հակաբարոյական վարքագիծ դրսևորելու վերաբերյալ արվյալներ չեն սրացվել:

Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա [REDACTED] նկատմամբ պարիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պարժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պարժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: Տվյալ դեպքում պարիժը պայմանականորեն չկիրառելը բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության և պարասիսանարվության անհատականացման, պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից: (...)»<sup>5</sup>:

18. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանը (...) քրեական գործի ուսումնասիրությամբ եզրահանգում է, որ Առաջին արյանի դատարանը (...) թեև ընդհանուր առմամբ հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ

<sup>5</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 68-83:

հանգել է ճիշտ հետևության, սակայն ամբաստանյալի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով որակելով՝ թույլ է փվել նյութական սխալ: (...)

Վերաքննիչ դատարանը, վերոգրյալի համարեքստում անդրադառնալով սույն քրեական գործի փաստական հանգամանքներին, հարկ է համարում արձանագրել, որ գործով ձեռք բերված ապացույցները բավարար են ամբաստանյալի մեղավորությունը հաստատելու համար: (...):

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ ամբաստանյալի մեղավորության մասին են վկայում մասնավորապես [REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED] քանի որ փուժողին հաջողվում է ազարվել [REDACTED] ձեռքերից և դիմել փախուստի:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ թեև փուժողի նկատմամբ գործադրված ֆիզիկական ներգործության հետևանքով վերջինին ֆիզիկական վնաս չի պարճառվել, սակայն ամբաստանյալն իր գործողություններով խոչընդոտ է արեղծել աղջկա՝ նշված վայրից հեռանալու համար, որպիսի գործողությունները հենց ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ ֆիզիկական ներգործության դրսևորումներ են, այսինքն՝ տեղավորվում են «բռնության» սահմանման տրամաբանության մեջ:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը (...) գրնում է, որ ամբաստանյալի մեղավորությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածով սահմանված հանցագործության մեջ, հաստատված է:

Այնուհետև, Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ամբաստանյալի արարքի քրեաիրավական որակմանը, հարկ է համարում նշել, որ վերջինի կողմից կատարված հանցագործությունը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ հանցակազմի որակյալ հարկանիշները

մեղսագրվում են հանցանք կատարած անձին, երբ դրանք գիտակցվել են վերջինի կողմից: Այսինքն՝ փվյալ դեպքում ամբաստանյալի արարքին տրված քրեաիրավական որակումը կլինեք արդարացի այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցներով հաստատվել է կողմից տուժողի 14 տարին լրացած չլինելու հանգամանքը գիտակցելը, այսինչ՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն քրեական գործում այդպիսի ապացույցները բացակայում են:

Այս առումով հարկանշական է, որ ամբաստանյալ [REDACTED] իր նախաքննական ցուցմունքներով հայտնել է, որ չի իմացել, որ [REDACTED] եղել է 14 տարեկանից ցածր, քանի որ եղել է բարձրահասակ: Ավելին՝ Առաջին արյանի դատարանում, պատասխանելով դատավարության մասնակիցների հարցերին, հայտնել է, որ «այդ երեխաները կլինեին մոտավորապես 15-16 տարեկան, իսկ այդ աղջիկը եղել է ամենաբարձրահասակը»: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ տուժողի օրինական ներկայացուցիչ [REDACTED] թիվ [REDACTED] գործի շրջանակներում դատարանում ցուցմունք փախու նշել է, որ [REDACTED] [REDACTED] արտաքննապես համապատասխանում է 14-15 տարեկաններին, քանի որ ավելի շուր է զարգացել:

Հարկանշական է նաև այն հանգամանքը, որ [REDACTED] ու [REDACTED] [REDACTED] նախկինում միմյանց ճանաչելու կամ որևէ կերպ միմյանց հետ առնչվելու վերաբերյալ քրեական գործում առկա չէ որևէ փաստական փվյալ, այսինքն՝ [REDACTED] այս հինքով ևս չէր կարող իմանալ [REDACTED] [REDACTED] 14 տարին լրացած չլինելու փաստը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, իր հերթին ուսումնասիրելով դեպքի րեաագրությունը, հարկ է համարում նշել, որ արտաքննապես հնարավոր չէ միանշանակ պնդել, որ ակնհայտ էր տուժողի 14 տարին լրացած չլինելը:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալը չի գիտակցել և ողջամտորեն չէր կարող գիտակցել այն հանգամանքը, որ դեպքի պահին տուժող [REDACTED] 14 տարին լրացած չի եղել, հետևաբար՝ ամբաստանյալին չի կարող մեղսագրվել ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թեև ամբաստանյալի կողմից տուժողի 14 տարին լրացած չլինելու հանգամանքը չի

գիրակցվել, սակայն գիրակցվել է անչափահաս լինելու հանգամանքը, ինչը հիմնավորվում է քրեական գործում առկա ապացույցներով: Մասնավորապես, ամբաստանյալն Առաջին արյանի դատարանում հայտնել է, որ տուժող [REDACTED] [REDACTED] կլինել մոտ 15-16 տարեկան: Նշվածից հետևում է, որ [REDACTED] [REDACTED] արարքը պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, այն է՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, որը կարարվել է անչափահասի նկատմամբ: (...)

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով հանցագործությունից հետո ամբաստանյալ [REDACTED] դրսևորած վարքագծին՝ մասնավորապես այն հանգամանքին, որ զերծ է մնացել այլ հանցավոր արարքներ կատարելուց և 2020 թվականից ի վեր չլինելով կալանավորված՝ չի խուսափել բնությունից ու դատից, ինչպես նաև հաշվի առնելով ամբաստանյալ [REDACTED] կատարած արարքի՝ հանրության համար վրանգավորության, աստիճանը և բնույթը, [REDACTED] [REDACTED] անձը բնութագրող և պարասխանարվությունն ու պատիժը մեղմացնող վերը նշված հանգամանքները, պարասխանարվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, գրնում է, որ ամբաստանյալ [REDACTED] [REDACTED] ուղղվելը հնարավոր է առանց նրա կողմից ազարագրկման ձևով նշանակված պատիժը կրելու, այսինքն՝ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Վերաքննիչ դատարանի այս հերևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ամբաստանյալի սեքսուոդգիական հերագրուման արդյունքում ի հայտ է եկել հոգեսեռական զարգացման հապաղում (...)<sup>6</sup>:

#### **Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.**

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մրնելը կայացված դատական ակտերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով»:

<sup>6</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 14-32:

Վերոգրյալից հետևում է, որ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո կայացված դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են 2022 թվականի հուլիսի 1-ից գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Հետևաբար, սույն բողոքի քննությունն իրականացնելիս, որպես Վճռաբեկ դատարանում բողոքի քննության ընթացակարգ հիմք է ընդունվում 2022 թվականի հուլիսի 1-ից գործող կարգը: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը քրեական գործը քննության է առել, իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտի իրավաչափությունը գնահատել է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների շրջանակներում, ուստի ստորադաս դատարանների հետևությունների իրավաչափության գնահատման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները:

20. Նախ, անդրադառնալով [REDACTED] մեղավորությունը հիմնավորող բավարար ապացույցների բացակայության վերաբերյալ պաշտպան Հ.Գալստյանի փաստարկներին<sup>7</sup>, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ [REDACTED] [REDACTED] մեղքը հաստատվում, իսկ պաշտպան Հ.Գալստյանի վճռաբեկ բողոքի պատճառարանությունները հերքվում են Առաջին ատյանի դատարանի դատավճռում թվարկված՝ վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար ամբողջությամբ, այդ թվում՝ տուժող [REDACTED], վկաներ [REDACTED], [REDACTED], [REDACTED] ցուցմունքներով, դեպքի վայրի զննության արձանագրությամբ, խուզարկություն կատարելու մասին արձանագրությամբ, որպես այլ փաստաթուղթ՝ ապացույց ճանաչված [REDACTED] շենքի տեսախցիկի տեսագրությամբ, տեսագրությունը զննելու մասին արձանագրություններով, համալիր ստացիոնար դատահոգեբուժական և սերսոպաթոլոգիական փորձաքննության եզրակացությամբ, լրացուցիչ ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ, իրեղեն ապացույց ճանաչված երկարաթև սվիտերով: Հարկ է նշել, որ Առաջին ատյանի դատարանը հատկանշական է համարել նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալ [REDACTED]

<sup>7</sup> Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:

վերջին խոսքի իրավունքից օգտվելիս ամբողջությամբ իրեն մեղավոր է ճանաչել, գոջացել է կատարածի համար և ներողություն խնդրել:

Ուստի, մեղավորությունը հիմնավորող ապացույցների բացակայության վերաբերյալ բողոքարկելու համար և ներողություն խնդրելու համար:

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքը նույն օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով վերաորակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

22. ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողությունները տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով՝

պարբերում է ազատագրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

2. Նույն գործողությունները, որոնք՝

(...)

3) կատարվել են անչափահասի նկատմամբ,

(...)

պարբերում են ազատագրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

(...)

2) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ՝

պարբերում է ազատագրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

Մեջբերված նորմը պատասխանատվություն է նախատեսում անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված առավել բարձր վտանգավորություն ներկայացնող հանցագործություններից մեկի՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների համար, որի հիմնական անմիջական օբյեկտն անձի սեռական ազատությունը և անձեռնմխելիությունն ապահովող հասարակական

հարաբերություններն են, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդես գալ անձի կյանքն ու առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը և այլն: Վերոնշյալ հանցակազմը դասվում է բռնությամբ գուգորդված սեռական հանցագործությունների շարքին, քանի որ օբյեկտիվ կողմից դրսևորվում է բռնության կամ բռնության սպառնալիքի միջոցով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով վերջինիս նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելով:

23. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Նախաքննության մարմնի որոշմամբ [REDACTED] մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ նա, տասնչորս տարին չլրացած անձի կամքին հակառակ, [REDACTED]

- Առաջին ատյանի դատարանը դատավճիռ կայացնելիս հանգել է հետևության, որ նախաքննության մարմինը [REDACTED] մեղաագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով որակել է ճիշտ<sup>8</sup>,

- Վերաքննիչ դատարանը գտել է, որ [REDACTED] կատարած հանցագործությունը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, այլ նույն օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Վերաքննիչ դատարանի համոզմամբ՝ [REDACTED] չի գիտակցել և ողջամտորեն չէր կարող գիտակցել այն հանգամանքը, որ դեպքի պահին տուժող [REDACTED] 14 տարին լրացած չի եղել: Վերաքննիչ դատարանը նշել է, որ [REDACTED] արարքին տրված քրեափրավական որակումը կլիներ արդարացի այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված բավարար սպացույցներով

<sup>8</sup> Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

<sup>9</sup> Տե՛ս սույն որոշման 17-րդ կետը:

հաստատվեր նրա կողմից տուժողի 14 տարին լրացած չլինելու հանգամանքը գիտակցելը, այնինչ, քրեական գործում այդպիսի ապացույցները բացակայում են: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը նշել է, որ [REDACTED] իր նախաքննական ցուցմունքներով հայտնել է, որ չի իմացել, որ [REDACTED] եղել է 14 տարեկանից ցածր, քանի որ եղել է բարձրահասակ: Իսկ Առաջին ատյանի դատարանում, պատասխանելով դատավարության մասնակիցների հարցերին, [REDACTED] հայտնել է, որ «այդ երեխաները կլինեին մոտավորապես 15-16 տարեկան, իսկ այդ աղջիկը եղել է ամենաբարձրահասակը»: Վերաքննիչ դատարանը հատկանշական է համարել նաև այն, որ [REDACTED] և [REDACTED] նախկինում միմյանց ճանաչելու կամ որևէ կերպ միմյանց հետ առնչվելու վերաբերյալ քրեական գործում առկա չէ որևէ փաստական տվյալ, ուստի՝ [REDACTED] այս առումով ևս չէր կարող իմանալ տուժողի 14 տարին լրացած չլինելու մասին: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ իր հերթին ուսումնասիրել է դեպքի տեսագրությունը և գտնում է, որ արտաքննապես հնարավոր չէ միանշանակ պնդել, որ ակնհայտ էր տուժողի 14 տարին լրացած չլինելը: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ թեև [REDACTED] տուժողի 14 տարին լրացած չլինելու հանգամանքը չի գիտակցել, սակայն գիտակցել է անչափահաս լինելու հանգամանքը, ուստի [REDACTED] արարքը պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, այն է՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, որը կատարվել է անչափահասի նկատմամբ<sup>10</sup>:

24. Վճռաբեկ դատարանը, գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ վերլուծության չի ենթարկել գործում առկա փաստական տվյալների համակցությունը և [REDACTED] կատարած արարքի քրեաիրավական որակման հարցում եկել է սխալ եզրահանգման:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով գործում առկա տեսագրության լազերային սկավառակը<sup>11</sup>, փաստում է, որ թեև տուժողը բարձրահասակ է, այնուամենայնիվ նրա դիմագծերից և արտաքին հատկանիշներից

<sup>10</sup> Տե՛ս սույն որոշման 18-րդ կետը:

<sup>11</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 45:

ակնհայտ է, որ վերջինս մանկահասակ է: Ընդ որում, հանցանքի կատարման պահին տուժողը եղել է ընդամենը 11 տարեկան<sup>12</sup>: Միննույն ժամանակ, գործում առկա են փաստական տվյալներ, որ [REDACTED] մոտեցել է [REDACTED] այն պահին, երբ վերջինը բակում խաղալիս է եղել այլ երեխաների հետ, որպիսի հանգամանքն ակնհայտ է եղել նաև [REDACTED] համար: Մասնավորապես, վերջինս դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ այդ օրը դրսում երեխաներ են խաղալիս եղել, խնդրել է նրանցից ամենաբարձրահասակին, որ նայի՝ հոսանքի հաշվիչների վրա պղնձի կամ այլումինի մալուխներ կան, թե ոչ<sup>13</sup>: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի համար ընդունելի է բողոքարկերի փաստարկն առ այն, որ [REDACTED] [REDACTED] աշխատելով [REDACTED], այսինքն՝ մինչև դեպքը, ելնելով իր գրադեցրած դիրքից և շփվելով մանկահասակ երեխաների հետ, չէր կարող չգիտակցել երեխաների հասունացման առանձնահատկությունները:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ [REDACTED] չի գիտակցել և ողջամտորեն չէր կարող գիտակցել այն հանգամանքը, որ դեպքի պահին տուժող [REDACTED] 14 տարին լրացած չի եղել, չի բխում քրեական գործում առկա տվյալներից, իսկ [REDACTED] ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղավոր ճանաչելու վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի հետևություններն հիմնավոր են:

25. Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ [REDACTED] [REDACTED] ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքը նույն օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով վերաորակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավաչափ չէ:

Միննույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ [REDACTED] վերագրվող արարքին **Վերաքննիչ դատարանի կողմից սխալ քրեաիրավական գնահատական տալու պարագայում**, Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ համաներման ակտը չկիրառելու

<sup>12</sup> Տե՛ս նույն որոշման 13-րդ կետը:

<sup>13</sup> Տե՛ս նույն որոշման 17-րդ կետը:

վերաբերյալ բողոքաբեր Հ.Գալստյանի փաստարկներին անդրադառնալն առարկայագուրկ է:

26. Անդրադառնալով [REDACTED] նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցին անդրադարձել է մի շարք նախադեպային որոշումներում՝ փաստելով, որ դատարանի համոզվածությունը և վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլնի, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա<sup>14</sup>՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները, և այլն<sup>15</sup>:

27. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով [REDACTED] կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, նրա անձը, վերջինիս առողջական խնդիրներ ունենալու հանգամանքը, մեղքն ընդունելը և

<sup>14</sup> Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գարուշ Մարտիկյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08, Արարադ Ավագյանի և Վահան Մահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշումները:

<sup>15</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մամոն Ամիրխանյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԳ/0034/01/12, Արսեն Մկրտչյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԳ/0093/01/12, Վանյա Բեգյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԳ/0018/01/13, Արամայիս Հովհաննիսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԳ/0014/01/14, Մհեր Հովհաննիսյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0039/01/15 և այլ որոշումները:

անկեղծորեն զղջալը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ եկել է եզրահանգման, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ուստի նրա նկատմամբ նշանակվող պատիժը պետք է պայմանականորեն չկիրառել<sup>16</sup>,

- Վերաքննիչ դատարանը վերաորակել է արարքը և միաժամանակ գտել, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակվող պատիժը պետք է պայմանականորեն չկիրառել<sup>17</sup>:

28. Նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 26-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից [REDACTED] նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքում դրված հանգամանքները ողջամտորեն չեն նվազեցնում ամբաստանյալի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանն այնքան, որ վերջինիս նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը լինի իրավաչափ:

29. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ [REDACTED] նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս Առաջին ատյանի դատարանը պատշաճ իրավական վերլուծության չի ենթարկել ամբաստանյալի կողմից կատարած հանցավոր արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող մի շարք գործոններ.

ա) խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ [REDACTED] մեղսագրվում է անչափահասի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված բարձր վտանգավորություն ներկայացնող հանցագործություններից մեկի՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարման փորձ, որի օբյեկտն անձի սեռական ազատությունը և անձեռնմխելիությունն ապահովող հասարակական հարաբերություններն են,

բ) անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ, մասնավորապես այն, որ ոտնձգել է անչափահասի

<sup>16</sup> Տե՛ս սույն որոշման 17-րդ կետը:

<sup>17</sup> Տե՛ս սույն որոշման 18-րդ կետը:

սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ, ինչը կարող է հանգեցնել բացասական հետևանքների՝ երեխայի մտավոր և հոգեկան բնականոն զարգացման հարցում,

զ) հանցագործության կատարման եղանակը, իրադրությունը՝ հանցանքի կատարմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, մասնավորապես այն, որ հանցավոր արարքը կատարել է 14 տարին չըրացած՝ **11 տարեկան** անձի նկատմամբ, վերջինս փորձել է հեռանալ շքամուտքից, իսկ մեղադրյալը փակել է նրա ճանապարհը՝ թույլ չտալով հեռանալ: [REDACTED] իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել, քանի որ մանկահասակ [REDACTED] հաջողվել է ազատվել նրա ձեռքերից և դիմել փախուստի: Միաժամանակ, ուշագրավ է, որ մեղադրյալը մինչև դեպքն **աշխատել է** [REDACTED]:

30. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին աստիճանի դատարանը [REDACTED] նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները պետք է կառուցել վերոնշյալ հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ մանրամասն վերլուծության արդյունքում, իսկ դրանք անտեսելը հանգեցրել է քրեադատավարական օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ [REDACTED] նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

31. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, [REDACTED] ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրվող արարքը վերատրակելով սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, թույլ է տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումն ամբողջությամբ բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Առաջին ատյանի դատարանը [REDACTED] մեղսագրվող արարքի իրավական որակման հարցում ճիշտ եզրահանգման է եկել, այնուամենայնիվ, վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի խախտում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի հիման վրա Առաջին ատյանի դատարանի դատական ակտը փոփոխելու համար:

Հետևաբար անհրաժեշտ է [REDACTED] նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը փոփոխել. նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելը պետք է վերացնել և թողնել կրելու Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված վերջնական պատիժը՝ 6 (վեց) տարի 5 (հինգ) ամիս 13 (տասներեք) օր ժամկետով ազատազրկումը՝ պատժի կրման սկիզբը հաշվելով [REDACTED] փաստացի արգելանքի վերցնելու պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-րդ, 363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. [REDACTED] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 10-ի որոշումն ամբողջությամբ բեկանել:
2. [REDACTED] վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի դատավճիռը՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով, փոփոխել. [REDACTED] նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 34-139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով

նշանակված պատիժը նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելը վերացնել և թողնել կրելու նրա նկատմամբ նշանակված վերջնական պատիժը՝ 6 (վեց) տարի 5 (հինգ) ամիս 13 (տասներեք) օր ժամկետով ազատազրկումը:

3. Պատժի կրման սկիզբը հաշվել [REDACTED] փաստացի արգելանքի վերցնելու պահից:

4. [REDACTED] վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ \_\_\_\_\_ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ \_\_\_\_\_ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

\_\_\_\_\_ Ա.ԳԱՆԻԵԼՅԱՆ

\_\_\_\_\_ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ